

գրէթէ ի նորոյ շինեցին զայն: Իր մէջ կառարուած հրաշա-
ստործութիւններով նշանաւոր էր այս եկեղեցին:

3. Ս. ՅԱԿՈՅ ԵԿԵՂԵՑԻ.

Էլ Պօսթան (կամ Այգեասան) թաղին մէջ. այս եկեղե-
ցին եւս հաւանաբար շինուած էր Պատրի Իւլ Կէմալ Վզրու-
կին օրով, կամ անոր հրամանաւ Հայոց տրուած. պատմու-
թեան մէջ կ'ընդամանակուի միայն իր վերաշինութեան առթիւ,
որ տեղի ունեցաւ 1168 — 1169-ին:

4. Նոյն թաղին մէջ, նոյն եկեղեցիին մօտը, Պատրի
Իւլ Կէմալ կանուխէն շինած էր ուրիշ մը, որուն անունը
չ'ընդուի: Կ'աւանդուի թէ երբեք պաշտամունք կատարուած
չէ անոր մէջ. և ի վերջոյ, 1094-ին անոր մէջ թաղուած է
Վզրուկը, որ հաւանաբար այդ նպատակաւ նոյն խակ պէտք է
շինել տուած ըլլայ զայն:

5. ՏԻՐԱՄՕՐ ՄԱՏՈՒՌ.

Հարս Զուլա կամ Զուլայիա թաղին մէջ. իր մասին
եղած տկնարկութենէն կ'հասկցուի թէ գեանափոր սրբալայր
մ'էր ան:

6. Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑԻ.

Կառուցուած էր վերեւ յիշուած Տիրամօր Մատուլին
վրայ: 1172-ին, երբ Սալահէասին գրաւեց Քահիրէն, և Հա-
յերը արտաքուսեցան Եգիպտոսի իրենց վանքերէն և եկեղե-
ցիներէն, Հայոց ծերունի Արքեպիսկոպոսը, զոր «Պատ-
րիարք» կ'ընչէին Արար պատմիչները, եօթանասուն և հինգ
զըջազիր Սուրբ գիրքեր միասին տուած՝ խոյս տուաւ զէպի
երուսաղէմ. այս եկեղեցիին մէջ մեկուսացաւ իր փոխա-
նորդը, որ քահանայ մըն էր:

7. Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ.

Տուրայի մէջ, Նեղոսի աջ ափին վրայ, էլ Պօսթան թա-
ղէն հազիւ երկու մղոն հեռու: Հաւանաբար տարբեր էր 2-րդ